ՄԻ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏԱՍԽԱՆ·

Բաւական ժամանակ է արդէն, որ Թիֆլիսի հայ թերթերից երկուսը միանման ուղղութեամբ և ջանքով աշխատում են պըղտորել իրանց պարզամիտ ընթերցողներին և նրանց միջոցով հասարակութեան դիւրահաւատ մասը հակակիր դարձնել դէպի Մայր Աթոռի ներկայ վարչութիւնը։ Նրանք ամեն տեսակ սուտ և սխալ լուրեր հրատարակեցին և հրատարակում են, գտնելով շարունակ առատ պաշար մի երկու թղթակիցների զրպարտիչ և անհիմն լուրերի և նամակների մէջ։ «Արարատ»-ը հարկ չէ համարել դորանց պատասխանել, կարևորութիւն չտալով, և համոզուած լինելով՝ որ հայ հասարակութիւնը ինքն արդէն ներկայումս շատ լաւ հասկանում է ամեն բան և շատ լաւ ճանաչում ամենին էլ։ Սակայն այսօր այդ լռութիւնը խզել ստիպում է արդէն յանդգնութեան և ծայրահեղ ինքնամոռացութեան հասցրած մի վարմունք, որ նկատում է վերջերս՝—կամաւ և չարամտութեամբ աղաւաղելով արտատպել ամսագրիս պաշտօնականներից՝ Սինոդի օրագրների քաղուածքներից մի քանիսը։

«Արարատ»-ի օգոստոս ամսատետրում (երես 762) նոյն ամսի 10-ի օրագրութեան քաղուածքում ասուած է, որ Սինոդը հրաման տուեց խնամէական 5-րորդ աստիճանի վերայ նշանագրուածների պսակադրութեան և ահա յիշեալ թերթերից մէկը կանգնում ասում է թէ՝ ինչպէս տեսնում ենք «Արարատ»-ի պաշտօնական բաժնից, Սինոդը պսակադրութեան հրաման է տուել խնամէական չհասութեան 4-րդ և 5-րդ աստիճանի վերայ։ Ամսագրիս Սեպ. տետրում (երես 839) նոյն ամսի 9-ի օրագրի քաղուածքում ասուած է, որ Սինոդը հրամայեց Մայր Աթոռի գան-

ձապահին տալ Մայր Աթոռի (միաբանութեան և բոլոր տնտեսական ճիւղերի) ձեմարանի և Ցպարանի ծախուց համար յընթացս Սեպտեմբեր ամսի 10,000 ռուբլի, որը ութն ամսուայ ընթացքում 64,000 ռուբլի ստացած գումարի հետ կանէ 74,000 ռ., իսկ նոյն թերթը աղաւաղելով այդ քաղուածը՝ ամբողջ ծախսը յատկացնում է ձեմարանին և գպրանոցին (՞ր գպրանոցին) և այդ հիման վերայ հաշուելով՝ ձեմարանի տարեկան ծախսը դնում է 104000 ռուբլի։

Այդ տեսակ վարմունքը կարող են թոյլ տալ իրանց միայն բարոյապէս փչացած մարդիկ, հասարակութեան վնասակար հրէշները։

Այս մի քանի տողերով մատնացոյց լինելով այդ անպատկառ աղաւաղումների և ստախօսութիւնների վերայ, «Արարատ»-ը հասարակաց կարծիքի արդար դատաստանին է յանձնում այդպիսի անձինքներին և նորանց վարմունքը, հաւատացած լինելով՝ որ եթէ կայ մեզանում հասարակական կարծիք, պիտի լինի ուրեմն և նորա դատաստանը։